



**ԿՐԿՆԱԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
12-16-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՎԻՄԱԿԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ***

ՀՏԴ 801.8

DOI: 10.52063/25792652-2024.3.22-134

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՀԱՏՐՅԱՆ

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան համալսարան» հիմնադրամի
հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր,
բանասիրական գիտությունների դոկտոր,
լեզվաբանության պրոֆեսոր,
ք. Վանաձոր, Հայաստանի Հանրապետություն

gxachatryan@yahoo.com

ORCID: 0009-0009-28701443

ԳԱՅԱՆԵ ԶՈՓՈՒՐՅԱՆ

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան համալսարան» հիմնադրամի
հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և
գրականության ամբիոնի ասպիրանտ,

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան համալսարան» հիմնադրամի
քոլեջի դասախոս, ընդհանուր բաժնի մասնագետ,
ք. Վանաձոր, Հայաստանի Հանրապետություն

gayanechopuryan17@gmail.com

ORCID: 0009-0000-5970-5935

Պայմանավորված միջինհայերենյան մի շարք վիմագիր արձանագրությունների ավելի ուշ հրատարակությամբ՝ դրանցում վկայված լեզվական փաստերի մի մասը լեզվաբանական ուսումնասիրության չի ենթարկվել: Վերջիններիս թվին են դասվում նաև խոնարհման համակարգի մաս կազմող կրկնաբաղադրյալ ժամանակաձևերը, որոնք առայսօր կարոտ են քննության, ինչն էլ վկայում է մեր կողմից ուսումնասիրվող թեմայի արդիականության մասին:

Սույն աշխատանքի նպատակն է քննել 12-16-րդ դարերի հայերեն վիմական արձանագրություններում վկայված կրկնաբաղադրյալ ժամանակաձևերը և վեր հանել դրանց արտահայտության ու բովանդակության պլանների առանձնահատկությունները:

Առաջադիր նպատակին հասնելու համար լուծել ենք հետևյալ խնդիրները.

- Անհրաժեշտ լեզվական փաստերը քաղել ենք «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի տասը պրակներից:

* Հոդվածը ներկայացվել է 15.07.2024թ., գրախոսվել՝ 11.09.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

- **Կատարել ենք շարադրանքի բովանդակությունից բխող եզրահանգումներ:**

Ուսումնասիրությունը կատարել ենք նկարագրական, վերլուծական և վիճակագրական մեթոդներով:

12-16-րդ դդ. արձանագրություններում գործածվել են թե՛ միջինհայերենյան, թե՛ գրաբարյան կրկնաբաղադրյալ ժամանակածներ, որոնք գերազանցապես վկայվել են նվիրատվական, շինարարական բնույթի՝ անեծք կամ օրհնանք պարունակող արձանագրություններում:

Արձանագրություններում արտացոլված լեզվական իրողությունները փաստում են, որ արձանագրողները կամ արձանագրության պատվիրատուները հակված են եղել կիրառելու հիմնականում գրաբարյան կրկնաբաղադրյալ ձևեր: Պատահական չէ, որ վերը նշված կառույցների արտահայտության հիմնական միջոցը գրաբարյան «անցյալ դերբայ + ստորադասական 2-րդ ապառնի» մասնակաղապարն է: Սակավ հանդիպում են նաև միջինհայերենյան «հարակատար դերբայ + ստորադասական 2-րդ ապառնի» և «վաղակատար դերբայ + ստորադասական 2-րդ ապառնի» մասնակաղապարներով կառույցներ:

Հիմնաբառեր՝ ստորադասական եղանակ, 2-րդ ապառնի, անկատար անցյալ ժամանակած, գրաբար, անցյալ դերբայ, հարակատար դերբայ, մասնակաղապար, կրկնաբաղադրյալ և համադրական ժամանակածներ, սեռի քերականական իմաստ:

Ներածություն

Միջին հայերենի բայական համակարգը, համեմատած գրական հայերենի զարգացման նախորդ և հաջորդ շրջափուլերի հետ, բավական հարուստ է և ընդգրկում. այն ներառում է գրաբարին, բարբառներին և արևելահայերենին ու արևմտահայերենին բնորոշ լեզվաոճական մի շարք առանձնահատկություններ: Վերջիններիս քննության և ուսումնասիրման համար նյութ են ծառայել միջինհայերենյան երկերն ու հիշատակարանները: Այս տեսանկյունից արժեքավոր են նաև վիմական արձանագրությունների տրամադրած լեզվական փաստերը:

Սույն աշխատանքի ուսումնասիրության նյութը քաղել ենք 12-16-րդ դարերի հայերեն վիմական արձանագրություններից¹՝ անդրադառնալով դրանցում վկայված կրկնաբաղադրյալ ժամանակածների արտահայտությանը միայն:

Կրկնաբաղադրյալ ժամանակածները գրական հայերենի զարգացման տարբեր շրջափուլերում ունեցել են արտահայտության ուրույն ձևեր, ինչը պայմանավորված է բայական համակարգի որակական և քանակական փոփոխություններով: Այսպես՝ գրաբարում կրկնաբաղադրյալ ժամանակածներ կազմվում էին միայն անցյալ դերբայի և *լինիմ* բայի խոնարհված ձևերի հարադրությամբ՝ *սիր(եց)եալ լինիմ, լինէի, լինիցիմ, եղէ, լէր ...* և այլն:

Մինչդեռ միջին հայերենում, պայմանավորված դերբայների թվի ավելացմամբ, կրկնաբաղադրյալ ժամանակածներն արտահայտվում են ոչ միայն գրաբարից ժառանգված «անցյալ դերբայ + *լինիմ* բայի դիմավոր ձև»² մասնակաղապարով, այլև

¹ Այսուհետ՝ Արձանագրություններ:

² *Լինիմ* բայից բացի, անցյալ դերբայի հետ կարող էին հանդես գալ նաև կամ և ունիմ բայերը, որոնք արդեն ոչ թե կրկնաբաղադրյալ ժամանակածներ են, այլ բաղադրյալ ստորոգյալներ, որոնցում անցյալ դերբայն արդեն ստորոգելի գործառնություն է կատարում՝ Նստեալ

հարակատար, վաղակատար, ապառնի (ապակատար) և այլ դերբայների ու *լինիմ* բայի խոնարհված ձևերի հարադրությամբ: Անշուշտ, վերջինները միևնույն հաճախականությամբ չեն գործածվում: Եթե վաղակատար, ապակատար և այլ դերբայների մասնակցությամբ կազմությունները՝ հազվադեպ են, ապա նույն բանը չենք կարող ասել *հարակատար – լինիմ բայի խոնարհված ձև* կրկնաբաղադրյալ ժամանակաձևերի մասին, որոնք միջին հայերեն լեզվական աղբյուրներում համեմատաբար լայն տարածում ունեն:

Հայ քերականագիտության մեջ կրկնաբաղադրյալ ժամանակաձևերի արտահայտության և բովանդակության պլանների մասին առկա են տարբեր տեսակետներ՝ կապված այն բանի հետ, որ միևնույն քերականական իմաստը կարող է արտահայտվել մի դեպքում համադրական, մյուս դեպքում՝ կրկնաբաղադրյալ բայաձևով: Օրինակ՝ *երթե ոք խափանել ջանա նզովեալ եղիցի ՅԱՅ, կատարիչ յիշատակիս աւրինեսցին ՅԱՅ*. (Դ. 1, ՈԿԶ¹, 16)²: *Եթե ոք գլխատակս խափանէ նզովեալ եղիցի յամենակալէն ԱՅ. հաստատուն պահողք աւրինին ՅԱՅ* (Դ. 1, 13-րդ դ., 3):

Ա. Աբրահամյանը նշում է, որ բայը սովորաբար կրկնաբաղադրյալ ժամանակաձևով «Ե խոնարհվում այն դեպքում, երբ ընդհարապես կամ տվյալ դիմավոր ձևերում կրավորական սեռի համար չի ունենում որևէ տարբերակիչ ձև: Օրինակ՝ «Եւ այնու կերակրեալ լինէր ...» (221), որը համադրական ձևով կլինէր *կերակրէր* և առանց ձևային փոփոխության ունի կրավորական սեռի նշանակություն»՝ «կերակրվում էր»:

«Ընդհանուր առմամբ նկատելի է, որ մեր մատենագիրները այսպիսի ձևեր կրավորական նշանակությամբ գործածում են անցյալ անկատար ժամանակում, իսկ անցյալ անկատար ժամանակը, ինչպես հայտնի է, ներգործածն և կրավորածն խոնարհումների համար տարբերիչ ձևեր չունի, նրա վերջավորություններն ընդհանուր են» (221): Ասել է՝ ըստ Ա. Աբրահամյանի՝ *անցյալ դերբայով* և *լինիմ* բայով ձևերը գործածվում են կրավորական սեռը ներգործականից տարբերելու համար: Սակայն սա միանշանակ չէ, և, ինչպես հենց Աբրահամյանն է նշում. « կարելի է ցույց տալ չեզոք սեռի բայերի խոնարհման օրինակներ ևս» (222):

Ս. Անթոյանը, անդրադառնալով միջին հայերենում «անցյալ դերբայից վերլուծական կառուցվածքով կազմված դիմավոր ձևերին (սիրեալ լինիմ, սիրեալ եղէ, սիրեալ լինիցիմ և այլն)», նշում է, որ «այս բաղադրյալ ժամանակների կիրառությունը նվազագույնի է հասել, առավելապես հանդիպում են ներկա ժամանակի ձևեր, ինչպես՝ լինին լեալ (ՍԳԴ 17), լինի արեալ (Ն. տ. 24)» (348): Ըստ լեզվաբանի՝ մյուս ժամանակաձևերով կիրառություններ չեն հանդիպում, և այս կազմությունները փոխարինված են հարակատար դերբայով արտահայտված ձևերին:

Պետք է նկատենք, սակայն, որ Արձանագրություններում հիշատակված կրկնաբաղադրյալ ժամանակաձևերով կազմությունները հակասում են ընդունված և լայն տարածում գտած տեսակետներին: Դրանց բնորոշ են մի շարք առանձնահատկություններ, որոնց կանոնադաշտանք ստորև:

Կրկնաբաղադրյալ ժամանակաձևերի կիրառությունը Արձանագրություններում

կայ 'Լ լայ կաբվուկ ի քարին, Ահաբել լինէր ի ձեռն որսորդին: Հայեաց տեսանել յայտնի, Թե ալ՝ օր պահեալ կայ (Հայկական ժողովրդական միջնադարեան երգեր)

¹ «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի պրակ 3-ից սկսած վերջնականորեն արձանագրության թվականը նշել են նաև թվային արժեքով, իսկ մինչ այդ ներկայացվել է միայն տառային արժեքը, որին, արձանագրության հստակ թվականը իմանալու համար պետք է ավելացնենք 551:

² ԴՅԿ-ից հղումները կտրվեն մեջբերումների կից՝ նշելով պրակը, արձանագրության ժամանակը և էջը:

Սովորաբար Արձանագրությունները լինում են «Ա. հիշատակագրային, Բ. շինարարական, Գ. նվիրատվական, Դ. իրավականոնական, Ե. կրոնաբարոյախոսական, 2. խառն» բնույթի (Գրիգորյան 67): Հատկապես լայն տարածում ունեն շինարարական և նվիրատվական բնույթի արձանագրությունները: Հենց դրանց կազմում են գերազանցապես հանդիպում կրկնաբաղադրյալ ժամանակաձևով կառույցներ, որով էլ բացատրվում է վերջիններիս հաճախադեպությունը: Սակայն վերջինս չի ենթադրում տարբեր կրկնաբաղադրյալ ժամանակաձևերի առկայություն: Բանն այն է՝ Արձանագրություններում առկա կրկնաբաղադրյալ ժամանակաձևերի դիմավոր բաղադրիչը բոլոր կիրառություններում վկայված է ստորադասական 2-րդ ապառնի ժամանակաձևով: Իբրև կանոն, վերջիններս հանդես են գալիս Արձանագրությունների վերջում՝ անեծք և/կամ օրհնանք պարունակող նախադասությունների մեջ: Դրանցում մի դեպքում միաժամանակ արտահայտվում է և՛ անեծք, և՛ օրհնանք, մյուս դեպքում՝ կամ անեծք, կամ օրհնանք:

Հաճախ Արձանագրություններում անեծքները և օրհնանքները քերականական նույն կառուցվածքը չունեն: Դրանցում կրկնաբաղադրյալ ժամանակաձևերի փոխարեն կարող են հանդես գալ համադրական կազմություններ: Ըստ աշխարհագրական ընդգրկման՝ առանձնանում են Անիի, Գորիսի, Սիսիանի, Շիրակի, Լոռու, Արցախի տարածաշրջանների Արձանագրությունները, որոնցում անեծքներն ու օրհնանքները տարբեր հաճախականությամբ վկայվել են և՛ կրկնաբաղադրյալ, և՛ համադրական ժամանակաձևերով, մինչդեռ Գեղարքունիքի մարզի Կամոյի և Մարտունու շրջաններում նույն իմաստն արտահայտվել է միայն համադրական կազմությամբ: Հմմտ., մի կողմից՝ *եթէ որ զհիշատակս խափանե Նզովեալ եղիցի յամենակայէն ԱՅ* (Դ. 1, 13-րդ դ., 3): *Էթէ որ հանել ջանայ*, *Նզովեալ լիցի ՅԱՅ եւ ամենայն սրբոց. ամեն Դ. 10, 1222, 66*): *Կատարիչք աւրինեալ եղիցին* (Դ. 9, 1242, 374-375): *որ հակառակի կամ գրկել ջանայ զայս տեղերս ի ՍԲ Գորգայ, ոսիսն նորա ԱԾ եղիցի և ինքն գրկել լիցի յավիտենեցն և մեր մեղացն պարտապան՝ առաջի ԶԻ* (Դ. 5, 1265, 2), մյուս կողմից՝ *կատարիչք հրամանաց մերոց աւրինեացին ի ՏԷ* (Դ. 4, 13-րդ դ., 19): *եւ կատարիչքն աւրինին* (Դ. 4, 1286, 122-123):

Քերականական այս զուգաձևությունն այնքան է սովորական, որ վկայվում է անգամ միևնույն նախադասության մեջ: Օրինակ՝ *արդ եթէ որ շորթել ջանա :ՅԺԸ: իցն Նզովեալ եղիցին կատարիչքն աւրինին ՅԱՅ* (Դ. 1, ՈԶԸ, 17): *մարդն այն Նզովեալ եղիցի ի մահ և ի կեանս, զինչ ի յԱդամա մինչ ի զայրուստն ԶԻ Նզովք կա՝ ի վերա նորա եղիցի, երերե(ա)լ¹ և տատանե(ա)լ լիցի որպես Կանեն, եւ որք հաստատ...ն՝ աւրինին ՅԱՅ* (Դ. 9, 1223, 239-240):

Վերոնշյալից հետևում է նաև, որ զուգաձևություններն արտահայտվում են ոչ միայն գրաբարի *լինիմ* բայի 2-րդ ապառնիի միևնույն դեմքը նշող *եղիցի* և *լիցի* դիմային ձևերի մասնակցությամբ կազմված կրկնաբաղադրյալ ժամանակաձևերով (*Նզովեալ եղիցի* և *երերե(ա)լ և տատանե(ա)լ լիցի*)², այլև գրաբարյան կրկնաբաղադրյալ և միջին հայերենին բնորոշ ըղձական ապառնի համադրական ժամանակաձևերով:

Ինչ վերաբերում է վերծանողի կողմից վերականգնված հնչյուններին, ապա, մեր կարծիքով, դա կարելի էր նաև չանել՝ տվյալ ժամանակահատվածում և

¹ Կլոր փակագծերում ներկայացնում ենք վերծանողի կողմից կատարած վերականգնումները:

² Գրաբարում *լինիմ* բայը ստորադասական 2-րդ ապառնիի ժամանակաձևում կազմության զուգաձևություն ունի, որի դրսևորումը տեսնում ենք նաև արձանագրություններում (Խաչատրյան 264):

տարածաշրջանում անցյալ դերբայի *եա>ե* պատմական հնչյունափոխությամբ ապայմանավորված¹:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարող ենք նշել, որ՝

1. Նույն քերականական իմաստն արձանագրություններում ունի արտահայտության երեք ձև, որոնք երկու դեպքում արտահայտվում են *«անցյալ դերբայ + լինիմ բայի խոնարհված ձև»* մասնակաղապարով, երրորդ դեպքում՝ արդեն ըղձական ապառնի իմաստով գործածված գրաբարի անկատար ներկա ժամանակաձևով:

2. Արձանագրություններում կրկնաբաղադրյալ ժամանակաձևի բաղադրիչ անցյալ, հարակատար և վաղակատար դերբայները հիմնականում արտահայտվում են *նզովել* կամ *օրինել*, հազվադեպ՝ այլ բայերով:

Կրկնաբաղադրյալ ժամանակաձևերի արտահայտության մասնակաղապարները Արձանագրություններում

«Դերբայ + լինիմ բայի խոնարհված ձև» կաղապարով կրկնաբաղադրյալ ժամանակաձևը Արձանագրություններում արտահայտվում է հետևյալ մասնակաղապարներով՝

ա) *«անցյալ դերբայ + լինիմ բայի խոնարհված ձև»*, որում *լինիմ* բայը վկայվում է ստորադասական 2-րդ ապառնի ժամանակաձևի *եղիցի* և *եղիցին* խոնարհված ձևերով, քանի որ դրանցով արտահայտվում են անեծքներ և կամ օրինանքներ, որոնք սովորաբար ունեն կատարելի գործողության իմաստ:

Հիշյալ ժամանակահատվածի Արձանագրություններում արձանագրողները կամ արձանագրության պատվիրատուները նախընտրել են գրաբարից ժառանգված հենց նշված մասնակաղապարի գործածությունը՝ ամենայն հավանականությամբ խուսափելով հասարակ ոճից: Օրինակ՝ *եւ եթէ որ առաջնորդ որ լինի խափանէ նզովեալ եղիցի, իսկ (կա)տարիչ գրոյդ աւրինեալ եղիցին* (Դ. 10, 13-րդ դ., 97):

բ) *«Հարակատար դերբայ + լինիմ բայի խոնարհված ձև»*, որը հանդիպում է միայն Գորիսի, Վայոց ձորի և Արցախի տարածաշրջանների Արձանագրություններում՝ *լիցի/եղիցի* կազմություններով, ինչպես՝ *թէ որ ի հայոց կամ ի տաճկաց խլել ջանա :ՅԺԸ: հարապետացն նզոված եղիցի* (Դ. 2, 2ԺԴ, 52): *ով զհայրենիքս հանէ ի սբ ուխտես :ՅԺԸ: (318) հայրապետաց նզոված լիցի և իմ մեղացն պարտական* (Դ. 5, 1243, 24):

Նշենք, որ կրկնաբաղադրյալ ժամանակաձևի կազմությանն այս դեպքում ավելի հաճախ մասնակցում է *եղիցի* բաղադրիչը:

գ) *«Վաղակար դերբայ + լինիմ բայի խոնարհված ձև»*, որը վկայվում է ստորադասական 2-րդ ապառնի *լիցի/եղիցի* խոնարհված ձևերով Կատ(ար)իչ(ք) գրոյս *օրինել լիցի* ՅԱՅ (Դ. 6, 40): *Որ խափանէ եւ հանէ յերիսս սբ ժողովոյն նզովել լիցի* (Դ. 9, 1222, 114): *ով զհողն յեկեղեցոյս հանէ նզովել եղիցի. ժամին չառնող դատի ՅԱՅ* (Դ. 5, 31):

Դիտարկելով վերոնշյալ մասնակաղապարները՝ նկատելի է, որ՝

1. դրանցից առաջինում անցյալ դերբայով կիրառությունները գրաբարաբանություն են, մինչդեռ երկրորդում և երրորդում գրաբարաբանություն են միայն ստորադասական 2-րդ ապառնիով արտահայտված դիմավոր ձևերը:

¹ Անցյալ դերբայի *եա>ե* անցման առաջին վկայությունը գտնում ենք «Արուճի տաճարի ՅԺ2 (867) թ. արտոնագրում՝ Զինչ իւրեանց բնին ռասմ էր լել» (լեալ>լել) (Ավագյան 205):

2. դրանք ունեն դիմաթվային սահմանափակություն. դիմավոր բաղադրիչը վկայվում է միայն *լինիմ* բայի ստորադասական 2-րդ ապառնի ժամանակաձևի եզակի կամ հոգնակի 3-րդ դեմքով և կառույցին հաղորդում է կրավորական սեռի քերականական իմաստ:

Եզրահանգումներ

12-16-րդ դարերի հայերեն վիմական արձանագրություններում վկայված լեզվական իրողությունները նպաստում են միջինհայերենյան քերականագիտության մեջ բացթողումները լրացնելուն և նոր դիտարկումներ կատարելուն: Արձանագրությունների քննությունը ցույց է տալիս, որ՝

1. Դրանցում հաճախադեպ են ոչ միայն համադրական և վերլուծական, այլև կրկնաբաղադրյալ ժամանակաձևերով կառույցներ:

2. կրկնաբաղադրյալ ժամանակաձևերով կազմությունները վկայված են միջին դարերում լայն տարածում գտած շինարարական և նվիրատվական բնույթի՝ անեծք կամ օրհնանք պարունակող Արձանագրություններում, որով էլ պայմանավորված է դրանց հաճախադեպությունը:

3. Կրկնաբաղադրյալ ժամանակաձևեր արտահայտվում են երեք մասնակադապարով՝ «*անցյալ դերբայ + եղիցի/եղիցին*», «*հարակատար դերբայ + լիցի/եղիցի*», «*վաղակատար դերբայ + լիցի/եղիցի*», և ունեն կրավորական սեռի քերականական իմաստ:

4. Կրկնաբաղադրյալ ժամանակաձևի՝

4.1. անդեմ բաղադրիչն արտահայտվում է գերազանցապես գրաբարի *օրհնեմ* և *նզովեմ* բայերով, որոնցով վկայված հիշատակությունները հիմնականում արտահայտվում են միևնույն կաղապարով:

4.2. դիմավոր բայաձևն ունի դիմաթվային սահմանափակություն (վկայվում է եզակի և հոգնակի թվի 3-րդ դեմքով):

5. զուգաձևություններն արտահայտվում են ոչ միայն գրաբարի *լինիմ* բայի 2-րդ ապառնի միևնույն դեմքը նշող *եղիցի* և *լիցի* դիմային ձևերի մասնակցությամբ կազմված կրկնաբաղադրյալ ժամանակաձևերով, այլև գրաբարյան կրկնաբաղադրյալ և միջին հայերենին բնորոշ ըղձական ապառնի համադրական ժամանակաձևերով:

ՕԳՏԱԳՈՐԾԿԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Աշոտ. *Գրաբարի ձեռնարկ*. Երևան, 1976:
2. Անթոսյան Սամվել, Մուրադյան Հովհաննես. *Ավնարկներ միջին գրական հայերենի պատմության*. ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972:
3. Ավագյան Սուրեն. *Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն*. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973:
4. Ղազարյան Ռուբեն, Ավետիսյան Հենրիկ. *Միջին հայերենի բառարան*. Երևանի պետական համալսարանի հրատ., Երևան, 2009:
5. Գրիգորյան Գրիգոր. *Հայկական վիմագրություն*. «Չանգակ-97» հրատ., Երևան, 2000:
6. *Դիվան հայ վիմագրության*. Պ. 1, Անի քաղաք (Կազմ.՝ Հ.Ա. Օրբելի, Պրակի խմբ.՝ Առաքելյան Բ.), ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1985:

7. *Դիվան հայ վիմագրության*. Պ. 2, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ (Գլխ. խմբ.՝ Օրբելի Հ., հատորի խմբ. Առաքելյան Բ.), ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1960:
8. *Դիվան հայ վիմագրության*. Պ. 3, Վայոց Ձոր, Եղեգնաձորի և Ագիգբեկովի շրջաններ (Կազմ.՝ Բարխուդարյան Ս.) ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1967:
9. *Դիվան հայ վիմագրության*. Պ. 4, Գեղարքունիք (Կազմ.՝ Բարխուդարյան Ս.), ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1973:
10. *Դիվան հայ վիմագրության*,. Պ. 5, Արցախ (Կազմ.՝ Բարխուդարյան Ս.), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1982:
11. *Դիվան հայ վիմագրության*. Պ. 6, Իջևանի շրջան (Կազմ.՝ Ավագյան Ս., Ջանիդարյան Հ.), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977:
12. *Դիվան հայ վիմագրության*. Պ. 9, Լոռու մարզ (Կազմեցին՝ Բարխուդարյան Ս., Ղաֆադարյան Կ., Սաղումյան Ս.), ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2012:
13. *Դիվան հայ վիմագրության*. Պ. 10, Շիրակի մարզ (Պրակը հրատարակության պատրասեցին՝ Սարգսյան Գ., Հարությունյան Ա., Ասատրյան Կ.), ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2017:
14. Խաչատրյան. Գուրգեն. *Գրաբար*, ԳԱԱ ԼԻ հրատ., Երևան, 2023, Էջ 502:
15. *Հայ մատենագրության թուանշային գրադարան, հայկական ժողովրդական միջնադարեան երգեր*.
<http://109.68.126.138:8080/book/2350/2800/20969/%D5%80%D5%A1%D5%B5%D6%80%D5%A7%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>: Վերջին այց՝ 26.07.2024թ.:

WORKS CITED

1. Abrahamyan Ashot. *Grabari d'er'nark*, Erevan (Handbook of Ancient Armenian, Yerevan), 1976 (In Armenian).
2. Ant'osyan Samvel, Muradyan Hovhannes. *Aknarkner mijin grakan hayereni patmut'yan*, HSSH GA hrat., (Notes on the History of Middle Literary Armenian, Yerevan), 1972 (In Armenian).
3. Avagyan Suren. *Vimakan ard'anagrut'yunneri hnchyunabanut'yun*, SSH GA hrat., Erevan (Phonology of Epigraphic Inscriptions, Yerevan), 1973 (In Armenian).
4. Ghazaryan R'uben, Avetisyan Henrik. *Mijin hayereni bar'aran*, Erevani petakan hamalsarani hrat., Erevan (Dictionary of Middle Armenian, Yerevan), 2009 (In Armenian).
5. Grigoryan Grigor. *Haykakan vimagrut'yun*, 'Zangak-97' hrat., Erevan (Armenian Lithography, Yerevan), 2000 (In Armenian)
6. *Divan hay vimagrut'yan*, P. 1, Ani qaghaq (Kazm.՝ H.A. O'rbeli, Praki xmb. Ar'aqelyan B.), HSSR' GA hrat., (Divan of Armenian Lithography, Yerevan). 1985 (In Armenian).
7. *Divan hay vimagrut'yan*. P. 2, Gorisi, Sisiani yev Ghap'ani shrjanner (Glx. xmb. O'rbeli H., hatori xmb. Ar'aqelyan B.), HSSR' GA hrat., (Divan of Armenian Lithography, Yerevan), 1960 (In Armenian).
8. *Divan hay vimagrut'yan*. P. 3, Vayoc D'or, Eghegnad'ori ev Azizbekovi shrjanner (Kazm. Barxudaryan S.) HSSR' GA hrat., (Divan of Armenian Lithography, Yerevan), 1967 (In Armenian).

9. *Divan hay vimagrut'yan*. P. 4, Gegharquniq (Kazm. Barxudaryan S.), HSSR' GA hrat., (Divan of Armenian Lithography, Yerevan), 1973 (In Armenian).
10. *Divan hay vimagrut'yan*. P. 5, Arcax (Kazm. Barxudaryan S.), HSAH GA hrat., (Divan of Armenian Lithography, Yerevan), 1982 (In Armenian).
11. *Divan hay vimagrut'yan*. P. 6, Ijevani shrjan (Kazm. Avagyan S., Janp'oladyan H.), HSSH GA hrat., (Divan of Armenian Lithography, Yerevan), 1977 (In Armenian).
12. *Divan hay vimagrut'yan*. P. 9, Lor'u marz (Kazm. Barxudaryan S., Ghafadaryan K., Saghumyan S.), HH GAA "Gitut'yun" hrat., (Divan of Armenian Lithography, Yerevan), 2012 (In Armenian).
13. *Divan hay vimagrut'yan*. P. 10, Shiraki marz (Praky' hratarakut'yan patrasecin Sargsyan G., Harut'yunyan A., Asatryan K.), HH GAA "Gitut'yun" hrat., (Divan of Armenian Lithography, Yerevan), 2017 (In Armenian).
14. Xachatryan Gurchen. *Grabar*, GAA LI hrat. (Grabar (old Armenian), Yerevan), 2023 (In Armenian).
15. Hay matenagrut'yan t'uanshayin gradaran, haykakan jhoghovrdakan mijnadarean erger <http://109.68.126.138:8080/book/2350/2800/20969/%D5%80%D5%A1%D5%B5%D6%80%D5%A7%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80>, verjin aycy` 26.07.2024 (In Armenian).

THE EXPRESSION OF DOUBLE-COMPLEX TENSES IN THE ARMENIAN EPIGRAPHIC INSCRIPTIONS OF THE 12-16TH CENTURIES

GURGEN KHACHATRYAN

*"Vanadzor State University after H. Tumanyan" Foundation,
Department of Armenian Language and Literature, Professor,
Doctor of Philology, Professor of Linguistics,
Vanadzor, the Republic of Armenia*

GAYANE CHOPURYAN

*"Vanadzor State University after H. Tumanyan" Foundation,
College lecturer, General Department specialist;
Armenian language and literature department, Ph.D Student,
Vanadzor, the Republic of Armenia*

Due to the later publication of a number of Middle Armenian lithographic inscriptions, some of the linguistic facts recorded in them have not been linguistically studied. The latter also includes two-component tenses that are included in the conjugation system and are eager to be considered, this proves the relevance of the topic we are studying.

The purpose of this work is to consider the double tenses recorded in Armenian inscriptions of the 12th-16th centuries, and to highlight the features of the plans of their expression and content.

To achieve this goal, the following problems were solved:

- the necessary linguistic facts from ten volumes of the "Divan of Armenian Lithography" were obtained;
- the conclusions on the issue were drawn.

The study was mainly conducted using descriptive, analytical and statistical methods.

In the Armenian epigraphic inscriptions of 12th-16th centuries, both Middle Armenian and Old Armenian double-complex tenses were used, which were especially evidenced in inscriptions of a donative, constructive nature, containing a curse or a blessing.

The linguistic realities reflected in the inscriptions prove that the recorders or the orderers of the inscriptions tended to use mainly Old Armenian double-complex forms. It is no coincidence that the main mean of expression of the above-mentioned structures is the Old Armenian "past participle + subordinate 2nd future" partial patterns. In rare cases there are also structures of the Middle Armenian "participle 2 + subordinate 2nd future" and "perfect participle + subordinate 2nd future" partial patterns.

Key words: *subjunctive mood, 2nd future, past participle, Old Armenian, past participle, participle two, partial patterns, double-complex and comparative tenses, grammatical sense of voice.*

ВЫРАЖЕНИЕ ДВУХКОМПОНЕНТНЫХ ВРЕМЕН В АРМЯНСКИХ НАДПИСЯХ 12-16 ВВ.

ГУРГЕН ХАЧАТРЯН

*профессор кафедры армянского языка и литературы
Ванадзорского государственного университета имени О. Туманяна,
доктор филологических наук, профессор лингвистики,
г. Ванадзор, Республика Армения*

ГАЯНЕ ЧОПУРЯН

*Аспирант кафедры армянского языка и литературы
гуманитарного факультета Ванадзорского государственного университета,
преподаватель колледжа фонда
«Ванадзорский государственный университет имени О. Туманяна»,
специалист общего отдела Ванадзорского государственного
университета имени О. Туманяна,
г. Ванадзор, Республика Армения*

В связи с более поздней публикацией ряда среднеармянских литографических надписей некоторые из зафиксированных в них лингвистических фактов не подвергались лингвистическому изучению. К числу последних относятся и двухкомпонентные времена, входящие в систему спряжения, еще ожидающие своего изучения, что доказывает актуальность рассматриваемой нами темы.

Цель данной работы – рассмотреть двойные времена, зафиксированные в армянских надписях XII-XVI веков, и выделить особенности планов их выражения и содержания.

Для достижения поставленной цели мы решили следующие задачи:

1. выделили необходимые лингвистические факты из десяти томов книг «Диван Армянской литографии».
2. сделали выводы из изложенного материала.

Исследование проводилось на основе описательного, аналитического и статистического методов.

В XII-XVI вв. в армянских литографических надписях использовались и среднеармянские и древнеармянские удвоенные времена грабара, что особенно проявилось в надписях дарственного, строительного характера, содержащих проклятие или благословение.

Лингвистические реалии, отраженные в надписях, доказывают, что писари или заказчики надписей предпочитали использовать в основном редулицированные формы грабара. Не случайно основным средством выражения названных конструкций является причастие в грабаре – «причастие прошедшего времени + подчинённое 2-е будущее время». В редких случаях встречаются также структуры среднеармянских конструкций «прошедшее результативное причастие+ подчиненное 2-е будущее время» и «совершенное причастие + подчиненное 2-е будущее время».

Ключевые слова: *сослагательное наклонение, 2-е будущее время, несовершенное прошедшее время, грабар (древнеармянский), причастие прошедшего времени, относительное причастие, конструкция, редулицированное и союзное времена, грамматическое значение рода.*